ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N-015

ք.Երևան «22» սեպտեմբերի 2016թ.

«Պոժտեխնիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ս. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մի կողմից և «ՀՀ ԿԳԹ ԵՎ ԳԻՏ. ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Է. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վաճառողը պարտավորվում է Գնորդին վաճառել հակահրդեհային պաշտպանության միջոցներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա դիմաց պայմանագրի պայմաններին համապատասխան:

1.2. Ապրանքի անվանումը, գինը, տեսականին, քանակը ներկայացվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով:

## 2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Սույն պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված քանակություններով և միավոր արժեքներով հաշվարկված Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 120 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

2.2. Սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նշված պայմաններին համապատասխան Ապրանքի դիմաց Գնորդը վճարումները կատարում է ՀՀ դրամով, բանկային փոխանցումների միջոցով, ըստ սույն պայմանագրով նշված վաճառողի բանկային տվյալների, պայմանագրով սահմանված ժամկետներում:

2.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է նախատեսվել Գնորդի կողմից Վաճառողին կանխավճարի վճարման պայման:

2.4. Ապրանքի դիմաց սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված գինը Գնորդի կողմից Վաճառողին վճարվում է Ապրանքն ամբողջությամբ ստանալուց և երկկողմանի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդ պարտավոր է՝

- Գնորդը պարտավոր է ստուգել ապրանքի անվանումը, քանակը, որակը, տեսականին և ընդունել այն.
- Պայմանագրի պայմաններով ու ժամկետներում կատարել ապրանքի դիմաց վճարումները.
- Ապրանքի ընդունման ժամանակ հայտնաբերված թերությունների մասին անհապաղ հայտնել վաճառողին.

3.2 Գնորդն իրավունք ունի՝

- Վաճառողից պահանջել տրամադրել գնված ապրանքը, իսկ եթե Վաճառողը պետք է վաճառված ապրանքը առաքի գնորդին, ապա պահանջել պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում ապրանքը առաքել իր կողմից սույն պայմանագրով մատնանշված վայրը (հասցեն).

- Հրաժարվել պայմանագրի կատարումից՝ Վաճառողի կատարած ողջամիտ ծախսերը հատուցելու պայմանով.

3.3 Վաճառողը պարտավոր է՝

- Գնորդին վաճառել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք.
- Ապրանքի հետ Գնորդին փոխանցել ապրանքի բոլոր պատկանելիքները, ինչպես նաև ապրանքին վերաբերող գործարանային փաստաթղթերը (տեխնիկական անձնագիր) և այլն.
- թերություններով վաճառված ապրանքի դեպքում փոխարինել այն կամ ողջամիտ ժամկետում վերացնել ապրանքի թերությունները:

3.4 Վաճառողն իրավունք ունի՝

- Գնորդից պահանջել վճարելու վաճառված ապրանքի գինը, սույն պայմանագրի պայմաններով և սահմանված ժամկետներում.
- Հրաժարվել պայմանագրից՝ Գնորդի կատարած ողջամից ծախսերը հատուցելու պայմանով:

## 4. Երաշխիքային ժամկետը

4.1 Սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով մատնաշված ապրանքի ամբողջ տեսականու համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 12 օրացուցային ամիս՝ ապրանքի առաքման կամ կողմերի կողմից ընդունման-հանձնման ակտը երկկողմանի ստորագրելու պահից սկսած, պայմանով, որ ապրանքի պահպանման և օգտագործման ընթացքում Գնորդի կողմից ապահովվեն Ապրանքի պահպանման և օգտագործման (շահագործման) համար Ապրանք արտադրողի կողմից նախատեսված պայմանները:

4.2 Սույն պայմանագրի 4.1 կետի պայմանների ապահովմամբ ապրանքի օգտագործման (շահագործման) երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունների վերացումը իրականացվում է Վաճառողի կողմից՝ իր հաշվին:

## 5. Կողմերի պարտավորությունները

5.1 Սույն պայմանագրի պայմանների և ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Ապրանքի առաքման կամ ապրանքը Գնորդին հանձնելու պայմանի ուշացման դեպքում Վաճառողը Գնորդին վճարում է տույժ՝ Ապրանքի ընդհանուր արժեքի 0.05%-ի չափով, յուրաքանչյուր ուշացված օրվա համար, բայց ոչ ավելին, քան պայմանագրի ընդհանուր գնի 5%-ը:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի դիմաց վճարման ուշացման դեպքում, Գնորդը վաճառողին վճարում է տույժ՝ ժամկետանց վճարի գումարի 0.05%-ի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելին, քան պայմանագրի ընդհանուր գնի 5%-ը:

## 6. Վեճերի լուծման կարգը

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կողմերը լուծում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն

պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ կատարումը:

8.2 Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից:

8.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Վաճառող | Գնորդ |
|---|---|
| «Պոժտեխնիկա» ՍՊԸ | «ՀՀ ԿՐԹ ԵՎ ԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ |
| Իրավ. հասցե` ՀՀ , ք.Երևան, Ազատության 8/37 | Իրավ. հասցե` ք. Արարատ, Խանջյան 67 |
| Գործ. հասցե` ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան փ. 27/1 | Գործ հասցե` ք. Արարատ, Խանջյան 67 |
| ՀՎՀՀ` 01013653 | ՀՎՀՀ 04000082 |
| «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ` 23800-29558920100 | h/h 11500123033901 |
| Տնօրեն | Տնօրեն |
| ______ Ս. Կարապետյան | ______ Է. Գասպարյան |

Հավելված 1
«22» սեպտեմբերի 2016թ.
թիվ 015 պայմանագրի

Ապրանքի անվանումը, տեսականին, քանակը գինը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը % | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կրակմարիչ ОП-4 | հատ | 8 | 12500 | 100000 | 20% | 20000 | 120000 |
| Ընդամենը | | | | | 100000 | 20% | 20000 | 120000 |

Վաճառող

«Պոժտեխնիկա» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ք.Երևան,
Ազատության 8/37
Գործ. հասցե՝ ք. Երևան, Գյուլբենկյան փ. 27/1
ՀՎՀՀ՝ 01013653
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ»
Հ/Հ՝ 23800-29558920100
Տնօրեն

Ս.Կարապետյան

ԳՆՈՐԴ

«ՀՀ ԿՐԹ ԵՎ ԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ
Իրավ. հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 67
Գործ հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 67
ՀՎՀՀ 04000082
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
h/h 11500123033901
Տնօրեն

Լ. Գասպարյան

Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ

Ա0607463301

# Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 23 | Սեպտեմբեր | 2016 թ. | Ա | 0607463301 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |
|---|---|---|---|---|
| 23 | Սեպտեմբեր | 2016 թ. | | |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | 22 Սեպտեմբեր, 2016 թ. | 015 | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Վճարման ձևը՝ անկանխիկ

## Ապրանքներ մատակարարող (առաքող) անձ

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 0 1 3 6 5 3 |
| [12] Անվանումը | «ՊՈԺՏԵԽՆԻԿԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 0 1 3 6 5 3 / 1 |
| [14] Բանկային տվյալները | Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ N 23800-29558920100 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ. 8 37 |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | ք. Երևան, Գյուլբենկյան27/1 |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

## Ապրանքներ ձեռք բերող անձ

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 4 0 0 0 0 8 2 |
| [19] Անվանումը | ՀՀ ԿՐԹ ԵՎԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻՊԵՏ.ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | Հայբիզնեսբանկ N 11500123033901 |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |

| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը | Որից՝ ակցիզ. հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | Կրակմարիչ ՕП-4 | հատ | 8 | 12500 | 100000 | 20 | 20000 | 120000 | |
| Ընդամենը | | | | | 100000 | X | 20000 | 120000 | |

Դուրս գրող KARAPETYAN SAMSON 4005790168
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

23/09/2016 14:11:38

22-09-2016,
20-09-2016 թ.

24.09.2016թ.

# ԱԿՏ

## ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան «23» սեպտեմբերի 2016թ.

Հիմք ընդունելով «Պոժտեխնիկա» ՍՊ ընկերության և «ՀՀ ԿՐԹ ԵՎ ԳԻՏ. ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ միջև 2016 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված թիվ 015 Պայմանագիրը՝

Վաճառողը՝ «Պոժտեխնիկա» ՍՊընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Ս.Կարապետյանի, **հանձնեց**, իսկ Գնորդը՝ «ՀՀ ԿՐԹ ԵՎ ԳԻՏ. ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏ. ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Է. Գասպարյան, **ընդունեց** Պայմանագրի առարկա հանդիսացող **Ապրանքը**՝ պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված անվանման, տեսականու, գնի և քանակին համապատասխան:

Ապրանքը հանձնեց

«Պոժտեխնիկա» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ , ք.Երևան,
Ազատության 8-37
Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Գյուլբենկյան փ. 27/1
ՀՎՀՀ՝ 01013653
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ»
Հ/Հ՝ 23800-29558920100
Տնօրեն

Ս.Կարապետյան

Ապրանքն ընդունեց

ՀՀ ԿՐԹ ԵՎ ԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏ.
ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ
Իրավ. հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 67
Գործ հասցե՝ ք. Արարատ, Խանջյան 67
ՀՎՀՀ 04000082
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
h/h 11500123033901
Տնօրեն

Է. Գասպարյան